

Հ Ա Յ Ե Ց Ա Կ Ա Ր Գ

«ՄԹՆՈԼՈՐՏԱՅԻՆ ՕԴԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ

I. Ամփոփ համառոտագիր

1. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի հայեցակարգը մշակվել է ՀՀ բնապահպանության նախարարության կողմից:

2. Մթնոլորտային օդի պահպանության կառավարումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է 1994թ. ընդունված «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքով և օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերով: Օրենքն արդիականացնելու և մթնոլորտային օդի վրա որոշ բացասական ազդեցությունների կանխարգելման նպատակով վերջին տարիներին օրենքում կատարվել են մի շարք փոփոխություններ, վերջինը՝ 2011թ.:

Սակայն հասարարական և միջազգային հարաբերություններում տեղի ունեցած որոշակի զարգացումների հետևանքներով՝ հին նորմերի վերանայման և նոր մոտեցումների ամրագրման անհրաժեշտություն առաջացավ: Նկատի ունենալով, որ գործող օրենսդրությունը ժամանակակից մոտեցումներին համահունչ դարձնելու, ինչպես նաև առկա հակասությունները և բացթողումները վերացնելու համար անհրաժեշտ են արմատական փոփոխություններ, մշակվել է սույն Հայեցակարգը, որը իրավական հենք կհանդիսանա մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից գործընթացների ձևավորման համար: Հայեցակարգում հակիրճ ներկայացվել են խնդրին վերաբերող իրավական դաշտի վերլուծությունը և այն հիմնական խնդիրները, որոնք խոչընդոտում են ժամանակակից մոտեցումների կիրառմանը: Թվարկվել են հիմնական փոփոխությունները, որոնք անհրաժեշտ կլինի ներառել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենքում: Առաջարկվող փոփոխությունները դասակարգվել են հետևյալ տրամաբանությամբ՝ մթնոլորտային օդի որակի գնահատում, անշարժ աղբյուրներից արտանետումների սահմանափակում, շարժական

աղբյուրներից արտանետումների սահմանափակում և արտանետումների հաշվառում: Ներկայացվել են նաև նոր օրենքի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ փաստաթղթերի փաթեթների ուղղությունները:

II. Ներածություն

3. Մթնոլորտային օդի պահպանության ապահովման գործընթացներն ուղղված են աղտոտման աղբյուրներից արտանետումների կանխարգելմանը, իսկ դրա անհնարինության դեպքում հնարավորինս նվազեցմանը: Մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից մոտեցումները հիմնված են հետևյալ դրույթների վրա.

1) մթնոլորտային օդի որակի չափանիշները պետք է սահմանվեն այնպես, որ դրանցից բխող սահմանափակումները նպաստեն մարդու առողջության և շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցությունից խուսափելուն, կանխելուն կամ նվազեցնելուն.

2) մթնոլորտային օդի որակի գնահատման չափանիշները պետք է որոշվեն միասնական մեթոդների հիման վրա՝ հաշվի առնելով արդի գիտական զարգացումները.

3) մթնոլորտային օդի որակը գնահատելիս՝ որակի բարելավման ուղղությամբ, համապատասխան միջոցառումների իրականացման առաջնահերթությունը որոշելու համար, պետք է հաշվի առնել նաև օդի աղտոտման ներգործությանը ենթարկվող բնակչության թիվը և էկոհամակարգերը.

4) մթնոլորտային օդի որակի չափանիշներին հասնելու համար միջոցներ են ձեռնարկվում՝ ապահովելու համար աղտոտող (վնասակար) նյութերի խտությունների սահմանային թույլատրելի նորմատիվներն ու կրիտիկական մակարդակները.

5) մթնոլորտային օդի որակը գնահատելու համար պետք է չափորոշիչներն ու մեթոդները, ինչպես նաև տեղեկատվության եղանակները համահունչ և համատեղելի լինեն գիտական և տեխնիկական առաջընթացի հետ:

4. Մթնոլորտային օդի պահպանության կառավարման համակարգն ընդգրկում է հետևյալ բաղադրիչները՝ արտանետումների սահմանափակում (նորմավորում), հաշվառում, հսկողություն և աղտոտվածության մոնիթորինգ, աղտոտվածության գնահատում և իրազեկում:

5. Վնասակար նյութերի արտանետումների աղբյուրները բաժանվում են 2 խմբի՝ աղտոտման անշարժ (կայանքներ, սարքավորումներ) և շարժական (ավտոտրանսպորտ, այլ փոխադրամիջոցներ) աղբյուրներ:

6. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նպատակահարմար է շարադրել նոր խմբագրությամբ, քանի որ գործող օրենքում պետք է կատարվեն ծավալուն փոփոխություններ և լրացումներ՝ ամրագրելով նոր մոտեցումներ ու հասկացություններ և դրանց համապատասխան խմբագրել որոշ հոդվածներ: Առաջարկվող փոփոխությունների և լրացումների արդյունքում կունենանք այն իրավական հենքը, որի շնորհիվ մթնոլորտային օդի պահպանության ոլորտի քաղաքականությունն առավել նպատակաուղղված կլինի մթնոլորտային օդի վիճակի իրական բարելավմանը: «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը նոր խմբագրությամբ կունենա հետևյալ նախնական կառուցվածքը.

- 1) ընդհանուր դրույթներ.
- 2) նպատակն ու խնդիրները.
- 3) պետական կառավարումը մթնոլորտային օդի պահպանության բնագավառում,
- 4) մթնոլորտային օդի պահպանության բնագավառում գործունեության կազմակերպումը.
- 5) մթնոլորտային օդի աղտոտվածության գնահատումը.
- 6) մթնոլորտային օդի վիճակի վրա վնասակար ներգործությունների և դրանց աղբյուրների պետական հաշվառումը.
- 7) մթնոլորտային օդի պահպանության նկատմամբ հսկողությունը և վերահսկողությունը.
- 8) մթնոլորտային օդի պահպանության տնտեսական մեխանիզմը.
- 9) մթնոլորտային օդի պահպանության բնագավառում քաղաքացիների, իրավաբանական անձանց և հասարակական կազմակերպությունների իրավունքներն ու պարտավորությունները.
- 10) մթնոլորտային օդի պահպանության բնագավառում պետության օրենսդրությունը խախտելու համար պատասխանատվությունը.
- 11) մթնոլորտային օդի պահպանության բնագավառում պետության միջազգային համագործակցությունը:

III. Նախապատմություն

Իրավական դաշտի վիճակի վերլուծությունը

7. Առկա դրությամբ Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանության կառավարումն իրականացվում է «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության 1994 թվականի հոկտեմբերի 11-ի օրենքով (այսուհետ՝ Օրենք): Այս ժամանակաշրջանում հասարակական և միջազգային հարաբերու-

թյուններում տեղի են ունեցել որոշակի զարգացումներ, որոնք Օրենքում նոր պահանջների ամրագրման և հին նորմերի վերանայման անհրաժեշտություն են առաջացրել: Բացի այդ, Օրենքի իրավակիրառման գործընթացում բացահայտվել են թերություններ ու բացթողումներ, որոնք շտկելը նույնպես անհրաժեշտություն է: Օրենքի պահանջների իրականացման գործընթացները հիմնականում ապահովում են ներքոհիշյալ ակտերը՝

1) Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի «Մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործությունների պետական հաշվառման կարգը հաստատելու մասին» N 259 որոշում:

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի հունվարի 25-ի «Մթնոլորտի վրա տնտեսական գործունեության հետևանքով առաջացած ազդեցության գնահատման կարգը հաստատելու մասին» N 91-Ն որոշում:

3) Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» N 160-Ն որոշում:

4) Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի «Մթնոլորտ արտանետումների կազմի նորմերի և հսկման մեթոդների տեխնիկական կանոնակարգը հաստատելու մասին» N 67-Ն որոշում:

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի «Մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի արտանետումների նորմատիվների մշակման ու հաստատման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի մարտի 30-ի N 192 և 2008 թվականի օգոստոսի 21-ի N 953-Ն որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1673-Ն որոշում:

6) Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի հոկտեմբերի 16-ի «Մթնոլորտի գերնորմատիվային աղտոտվածության, կլիմայի փոփոխության և օզոնային շերտի վիճակի հետ կապված վտանգավոր հիդրոօդերևութաբանական երևույթների կանխատեսման, ազդարարման և արձագանքման կարգը հաստատելու մասին» N 1186-Ն որոշում:

8. Մթնոլորտային օդի վիճակը գնահատելու համար սահմանվում են մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվներ՝

1) մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվները սահմանվում են Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի N160-Ն որոշմամբ.

2) սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվները սահմանվում են երկու ժամկետային տարբերակով՝ միանվագ առավելագույն (20 բույանոց սնուշառմամբ) և միջին օրական: Առողջարաններում, հատուկ պահպանվող տարածքներում և զբոսաշրջային տարածաշրջաններում և կենտրոններում սահմանային թույլատրելի խտությունների նորմատիվները ընդունվում են դրա 0,8 գործակցով:

9. Վնասակար նյութերի արտանետումների հաշվառումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի N 259 որոշմամբ հաստատված կարգով՝

1) հաշվառվում են մթնոլորտային օդի վրա ներգործության աղբյուրներ ունեցող օբյեկտները, աղտոտող աղբյուրները, արտանետվող վնասակար նյութերի քանակները և տեսակները.

2) աղտոտման անշարժ աղբյուրների արտանետումները պետական հաշվառման ենթակայության տեսակետից դասակարգվում են ըստ դրանց տարեկան արտանետումների հիման վրա հաշվարկված օդի պահանջվող օգտագործման (ՕՊՕ) ցուցանիշի, որի ստորին շեմի համար Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի ապրիլի 22-ի N 259 որոշմամբ սահմանված է 200 մլն.խոր.մ ցուցանիշը.

3) հաշվառման ենթակա են աղտոտման շարժական աղբյուրներից մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող բոլոր շահագործվող օբյեկտները.

4) մթնոլորտային օդի վրա վնասակար ներգործություն ունեցող՝ պետական հաշվառման ենթակա օբյեկտներ ունեցող կազմակերպությունների ցանկը (տարեկան կտրվածքով) հաստատում է Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարը:

10. Աղտոտման անշարժ և շարժական աղտոտման աղբյուրներից արտանետումների կանխարգելման կամ նվազեցման գործընթացները տարբերվում են: Անշարժ աղբյուրների արտանետումների սահմանափակումն իրականացվում է էկոլոգիական սկզբունքով (եղևելով մթնոլորտային օդի ինքնամաքման ունակությունից), իսկ շարժական աղբյուրներից արտանետումների սահմանափակումը հիմնվում է շարժիչի և վառելիքի որակի վրա՝

1) անշարժ աղբյուրների արտանետումների սահմանափակման (սորմավորման) սկզբունքի (Էկոլոգիական) հիմնական գաղափարը հետևյալն է՝ յուրաքանչյուր աղտոտման աղբյուրից արտանետվող վնասակար նյութը պետք է լինի այնքան, որ ցրվելուց հետո գետնամերձ շերտում ստեղծի այնպիսի խտություն, որ այն, գումարվելով նույն նյութի ֆոնային խտությանը, չգերազանցի այդ նյութի սահմանային թույլատրելի խտությունը.

2) Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 27-ի N 1673-Ն որոշմամբ աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպություններն արտանետման չափաքանակները սահմանելու տեսակետից դասակարգվում են հետևյալ կերպ՝ 200 մլն-ից մինչև 2 մլրդ. խոր.մ ՕՊՕ-ի դեպքում արտանետման չափաքանակները սահմանվում են ըստ փաստացի արտանետումների, իսկ 2 մլրդ.խոր.մ –ից ավելի ՕՊՕ ունեցող արտանետման աղբյուրների համար արտանետման չափաքանակները սահմանվում են սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) նախագծերի հիման վրա.

3) արտանետման թույլտվությունները՝ աղտոտման անշարժ աղբյուրների և աղտոտող նյութերի քանակական կամ որակական փոփոխությունների բացակայության դեպքում, ինչպես նաև տվյալ նյութերով ֆոնային գերնորմատիվային աղտոտվածության առաջացման բացակայության դեպքում, անժամկետ են.

4) աղտոտման շարժական աղբյուրների արտանետումների սահմանափակումը հիմնված է վառելիքի որակի և շարժիչի որակի ու սարքինության վրա: Հայաստանում չեն արտադրվում մեքենաներ կամ վառելիք, այդ իսկ պատճառով արտանետումների սահմանափակման հնարավորությունները որոշակի արգելքների և կազմակերպչական միջոցառումների վրա է հիմնված.

5) Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 7-ի N 373-Ն որոշմամբ արգելվեց չեզոքացուցիչներ չունեցող ավտոմեքենաների ներմուծումը Հայաստանի Հանրապետություն: Վերջին տարիներին մոտ 10 անգամ նվազեցվել է բենզինում և դիզելային վառելիքում ծծմբի պարունակության թույլատրելի քանակությունը:

IV. Խնդիրները և նպատակները

11. Հայաստանի Հանրապետությունում ընդունված չէ «աղտոտվածության կրիտիկական մակարդակ» չափանիշը: «Աղտոտվածության կրիտիկական մակարդակ» նշանակում է մթնոլորտային օդում աղտոտող նյութերի պարունակության սահմանված մակարդակ, որը գերազանցելու դեպքում, համաձայն ժամանակակից գիտելիքների,

անմիջական վնասակար ներգործության կենթարկվեն այնպիսի ընկալիչներ, ինչպիսիք են մարդիկ, բույսերը, էկոհամակարգերը:

12. Արտանետումների սահմանափակման գործող սկզբունքը չի նպաստում նոր, բնապահպանական տեսակետից ավելի մաքուր տեխնոլոգիաների ներդրմանը: Բացի նրանից, որ հաշվարկը հաշվի է առնում միայն արտանետման աղբյուրի և արտանետվող գազային խառնուրդի ելային տվյալները և որևէ կապ չունի արտադրական պրոցեսների կամ արտադրողականության հետ (քանի որ հաշվի է առնվում արտադրողական հզորությունը միայն, գ/վրկ), գործող օրենսդրությունը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 67-Ն որոշումը, թույլ է տալիս փաստորեն մեծացնել խողովակի բարձրությունը և ցրման հաշվարկում ապահովել պահանջվող գետնամերձ խտությունը միայն այդ միջոցառումով: Արտանետումների նորմավորումը իրականացվում է յուրաքանչյուր կազմակերպության համար, սակայն այն չի իրականացվում տարածքային մոտեցմամբ, հետևապես, այլ կազմակերպությունների, շարժական աղբյուրների և անդրսահմանային աղտոտման աղբյուրներից առաջացած աղտոտվածությունը հաշվի է առնվում միայն ֆոնային խտությունների տեսքով, ինչը լուրջ խոչընդոտներ է առաջացնում այն տարածքների համար, որտեղ ֆոնային խտությունները արդեն իսկ գերազանցում են սահմանային թույլատրելի նորմատիվները, ինչպես նաև այն տարածքների համար, որտեղ չի իրականացվում օդի աղտոտվածության մոնիթորինգ: Հայաստանի Հանրապետությունում մթնոլորտային օդի պահպանության բնագավառում դեռևս չեն գործում ստանդարտացման միջազգային կազմակերպության (ISO) համակարգերը և չկա բնապահպանական խնդիրների նկատմամբ «բարի կամքի» մոտեցում: Թերի է իրազեկումն այս ոլորտում: Հետևապես, եթե արտանետման չափաքանակները բավարարում են արտանետման թույլտվություն ստանալու համար, կազմակերպությունները որևէ լուրջ քայլեր կամ ներդրումներ չեն ձեռնարկում իրենց տեխնոլոգիաները փոխարինելու համար:

13. Շարժական աղբյուրների արտանետումների սահմանափակումները անմիջականորեն կապված են ավտոտրանսպորտային միջոցների մաշվածության և օգտագործվող վառելանյութի հետ: Հայաստանի նորմատիվ ակտերում արդեն ներդրվել են բենզինում կապարի և ավտոտրանսպորտի վառելիքում ծծումբի պարունակությունը սահմանափակող պահանջներ: Սակայն, հաշվի առնելով տրանսպորտի ոլորտի արտանետումների բաժինը ընդհանուր արտանետումների մակարդակում, անհրաժեշտ է հետևողականորեն խստացնել ներմուծվող մեքենաների նկատմամբ ներկայացվող

պահանջները՝ ներդաշնակեցնելով դրանք ԵՄ ու ԵԱՏՄ երկրներում գործող պահանջների հետ: Սահմանափակող միջոցառումները անհրաժեշտ է կիրառել հնարավորինս շուտ, միաժամանակ հաշվի առնելով նման միջոցառումների իրականացման արդյունքում հասարակության վրա առաջացող զգալի բեռը, երկրին հատուկ որոշ հանգամանքներ, մասնավորապես ավտոպարկի տարիքը: Մշակվող իրավական ակտերը պետք է նախատեսեն անհրաժեշտ անցումային ժամանակաշրջան:

14. Լիարժեք չի իրականացվում մթնոլորտային օդի մոնիթորինգը, մասնավորապես չի իրականացվում մթնոլորտային օդի հետազոտվող ցուցանիշներում կախված մասնիկների $PM_{2.5}$, PM_{10} -ի մոնիթորինգ, մթնոլորտի աղտոտվածության գնահատումը չի համապատասխանում միջազգային մոտեցումներին: Զարգացած երկրներում օդի աղտոտման աստիճանը գնահատվում է հիմնվելով օդի հիմնական աղտոտիչների (NO_2 , SO_2 , $PM_{2.5}$, PM_{10} , CO) մակարդակների վրա:

15. Հայաստանի Հանրապետության միջազգային գործունեությունը՝

1) Հայաստանը անդամակցում է բնապահպանական ուղղվածություն ունեցող ավելի քան 20 միջազգային պայմանագրերի, իսկ ներկայումս աշխատանքներ են տարվում ևս մի շարք պայմանագրերի միանալու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը (բնապահպանական մասով) ԵՄ օրենսդրությանը ներդաշնակեցնելու ուղղությամբ.

2) մթնոլորտային օդի պահպանության հետ անմիջական առընչություն ունեն ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիան և իր արձանագրությունները, մասնավորապես «Ծանր մետաղների մասին», «Կայուն օրգանական աղտոտիչների մասին (ԿՈԱ)» և «Թթվայնեցման, էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի դեմ պայքարի մասին (Գյութերբրգի)» արձանագրությունները, ՄԱԿ-ի «Կլիմայի փոփոխության մասին» շրջանակային կոնվենցիան և իր Կիոտոյի արձանագրությունը, ինչպես նաև «Օզոնային շերտի պահպանության մասին» Վիեննայի կոնվենցիան և «Օզոնային շերտը քայքայող նյութերի մասին» Մոնրեալի արձանագրությունը.

3) ՄԱԿ-ի ԵՏՀ «Մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտման մասին» կոնվենցիան կոչվում է նաև «օդի կոնվենցիա», քանի որ հենց այս պայմանագրով և իր արձանագրություններով են սահմանվում երկրների պարտավորությունները վնասակար նյութերի արտանետումների կրճատման մասով: Կոնվենցիայի նպատակն է՝ սահմանափակել և աստիճանաբար հնարավորինս

նվազեցնել և կանխարգելել օդի աղտոտումը՝ ներառյալ մեծ հեռավորությունների վրա օդի անդրսահմանային աղտոտումը.

4) «Օդի կոնվենցիային» համահունչ ԵՄ-ում վնասակար նյութերի արտանետումների չափաքանակները սահմանվում են համապատասխան հրահանգներով և նախատեսում են արտանետումների սահմանափակման տեխնոլոգիական սկզբունքը, որը հիմնված է «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» (ԼՀՏ) կիրառման վրա: Դրանք համարվում են տեխնիկական նորմատիվներ.

5) ՀՀ օրենսդրությամբ չի նախատեսված իրավական մեխանիզմ, որով գոյություն ունեցող տեխնոլոգիաները կարող են համարվել «լավագույն հասանելի»: «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ գործող օրենքով չի պարտադրվում նոր, ավելի ժամանակակից տեխնոլոգիաների կիրառումը, որոնք կապահովեն վնասակար նյութերի արտանետումների ավելի ցածր չափաքանակներ: ԼՀՏ-ի գաղափարը ներառված է Օրենքում, սակայն ներկայումս բացակայում են ԼՀՏ-ի կիրառման հատուկ պարտավորություններ.

6) գործող օրենսդրությամբ արտանետման սահմանային չափաքանակները որոշվում են միայն արտանետման աղբյուրի և արտանետվող գազային խառնուրդի ելային տվյալների հիման վրա կատարված հաշվարկով և բացառապես հաշվի չեն առնվում արտադրական պրոցեսները կամ արտադրողականությունը.

7) մթնոլորտային օդի պահպանության հետ անմիջական առընչություն ունեցող վերը նշված պայմանագրերից Հայաստանի Հանրապետությունը չի վավերացրել միայն «Ծանր մետաղների մասին», «Կայուն օրգանական աղտոտիչների մասին (ԿՈԱ)» և «Թթվայնեցման, էվտրոֆիկացիայի և գետնամերձ օզոնի դեմ պայքարի մասին (Գյոթերբորգի)» արձանագրությունները.

8) «Ծանր մետաղների մասին» արձանագրության հիմնական պահանջը որոշակի նյութերի մթնոլորտ գումարային արտանետումների նվազեցումն է հղումային տարվա համեմատ: Արձանագրությամբ պահանջվում է արտադրանքի պարտադիր հսկողության միջոցառումների իրականացում, «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներմուծում, սահմանային արժեքների օգտագործում որոշ արդյունաբերական աղբյուրների, ջերմակայանների ու թափոնների այրման դեպքում.

9) «Կայուն օրգանական աղտոտիչների մասին» արձանագրությունը պահանջում է մշակել և կիրառել արտանետումների կրճատման պլաններ և ռազմավարություններ: Ծանր մետաղների արձանագրության նման ԿՕԱ արձանագրությունը նույնպես

նախատեսում է «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներմուծում և սահմանային արժեքների օգտագործում.

10) Գյոթերորգի արձանագրությունը նախատեսում է սահմանային արժեքների օգտագործում անշարժ և շարժական աղբյուրների համար, պահանջում է արտադրանքի հսկման միջոցառումների, «լավագույն հասանելի տեխնոլոգիաների», էներգաարդյունավետությանը նպաստող միջոցառումների իրականացում, նվազ աղտոտող վառելիքի օգտագործում և ազգային ծրագրերի ու ռազմավարությունների մշակում: Գյոթերորգի արձանագրությունը պահանջում է ոչ միայն արտանետումների համընդհանուր նվազեցում՝ հիմք ընդունելով ընտրված հիմնամակարդակը, այլ նաև պարտավորեցնում է Կողմ երկրներին համապատասխանեցնել դրանք արտանետումների նվազեցման հատուկ սահմանված ազգային պարտավորություններին.

11) «Լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներմուծմամբ միայն կարելի է լուծել նաև էներգաարդյունավետության և էներգախնայողության, օգոնաանվտանգ նյութերի կիրառման խնդիրները.

12) արտանետումների սահմանային արժեքների ներդրումն ու ԼՀՏ-ի կիրառումը սերտորեն կապված են բնապահպանական թույլտվությունների համակարգի հետ, քանի որ այն համաշխարհային լայն տարածում ունեցող հիմնական մեխանիզմն է, որն ապահովում է բնապահպանական նորմավորման կատարումը տնտեսավարող սուբյեկտի կողմից: Ինչպես նշված է ԼՀՏ-ի սահմանման մեջ, սկզբունքն առնչվում է ողջ շրջակա միջավայրի վրա ազդեցության հետ՝ ներառելով օդը, ջուրը, հողերը, թափոնների գոյացումը, էներգաարդյունավետությունը և այլ կարևոր ասպեկտներ.

13) համաձայն բոլոր երեք արձանագրությունների՝ անհրաժեշտ է մշակել արտանետումների կադաստր, իրականացման ազգային ռազմավարություն կամ ծրագիր, կիրառել արտանետումների սահմանային արժեքներ, լավագույն հասանելի տեխնոլոգիաներ (ԼՀՏ), իրականացնել օդի որակի մշտադիտարկում՝ կարգավորվող նյութերի տեսակետից և այլն.

14) Հայաստանում վնասակար նյութերի արտանետումները վերահսկվում և կարգավորվում են սահմանային թույլատրելի արտանետումների (ՄԹԱ) սահմանման և արտանետումների թույլտվության տրամադրման միջոցով: Սակայն ՄԹԱ-ները սահմանվում են համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի փետրվարի 2-ի «Բնակավայրերում մթնոլորտային օդն աղտոտող նյութերի սահմանային թույլատրելի խտությունների (կոնցենտրացիաների-ՄԹԿ) նորմատիվները հաստատելու մասին» N 160-Ն

որոշմամբ հաստատված սահմանային թույլատրելի կոնցենտրացիաների և ուղղակիորեն համեմատելի չեն արձանագրությունների պահանջների հետ.

15) ավտոտրանսպորտի արտանետումները հաշվարկվում են օգտագործված վառելիքի ընդհանուր ծավալի հիման վրա: Մնացած արտանետումները որոշվում են համաձայն 2-SU ազգային վիճակագրական տվյալների հիման վրա, որը պարունակում է տնտեսավարող սուբյեկտի կողմից տրամադրած տեղեկատվությունը.

16) Հայաստանի օրենսդրությունում արդեն ընդգրկվել են ԵՄ և Գյոթեբորգի արձանագրության պահանջներին համապատասխանող վառելիքի որակի հատուկ ստանդարտներ: Միևնույն ժամանակ, Հայաստանի գործող օրենսդրությունը չունի շարժական աղբյուրներից արտանետումների սահմանափակման պահանջներ, բացառությամբ ավտոտրանսպորտի արտանետումների տեխնիկական բնութագրերի:

16. Օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերում կամ ոլորտին վերաբերող այլ իրավական ակտերում առկա են անհամապատասխանություններ և հակասություններ, մասնավորապես՝

1) հասկացությունների սահմանումը բնագավառին վերաբերող իրավական ակտերում տարբերվում են (մթնոլորտային օդ, մթնոլորտ, օդային տարածք, օդային ավազան; անշարժ աղբյուրներ, ամրակայված աղբյուրներ; աղտոտող նյութեր, վնասակար նյութեր; կոնցենտրացիա, խտություն; վնասակար ազդեցություն, բացասական ազդեցություն և այլն), կան բազմաթիվ հնացած արտահայտություններ և հղումներ, առկա են նույն հասկացության տարբեր մեկնաբանություններ.

2) մթնոլորտային օդի վիճակը գնահատելու համար ըստ Օրենքի սահմանվում են սահմանային թույլատրելի խտություններ (ՄԹԽ) և ֆիզիկական վնասակար ներգործությունների սահմանային թույլատրելի մակարդակների նորմատիվներ: Միևնույն ժամանակ այլ իրավական փաստաթղթերում գործածվում է նաև «Աղտոտող աղբյուրի շրջապատի (ակտիվ աղտոտման գոտու)» բնութագիրն արտահայտող գործակիցներ» և «մթնոլորտ արտանետվող նյութերի համեմատական վնասակարություն արտահայտող մեծություններ», որոնց սահմանումները Օրենքում բացակայում են: Օրենքում օգտագործվում են հասկացություններ, օրինակ՝ «ֆոնային աղտոտվածություն», որոնք առանց պարզաբանման միանշանակ չեն ընկալվում և Օրենքում չկա դրա սահմանումը, սակայն այն սահմանված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հունվարի 11-ի N 67-Ն որոշմամբ.

3) «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում ամրագրված գործունեության տեսակների դասակարգումն ըստ դրանց ազդեցության՝ տարբերվում են Օրենքում նախատեսված հաշվառման ենթակա չափանիշներից: Օրենքում կազմակերպությունները դասակարգվում են ըստ շրջակա միջավայրի վրա ազդեցության աստիճանի (այդ թվում մթնոլորտային օդի վրա նրանց ազդեցության), և այդ ազդեցության չափանիշն «օդի պահանջվող օգտագործում»-ն է (ՕՊՕ), իսկ «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքում կազմակերպությունները դասակարգվում են ըստ բնագավառների՝ Ա, Բ, Գ կատեգորիաներով: Այս տարբերությունները կարող են առաջացնել որոշակի խոչընդոտներ մթնոլորտային օդի պահպանության կառավարման տեսակետից: Օրինակ, փորձաքննության օրենքի տեսակետից ատոմակայանները կընդգրկվեն Ա կատեգորիայում, իսկ մթնոլորտային օդի պահպանության տեսակետից դրանք կհամարվեն «մաքուր» գործունեություն: Ցեմենտի արտադրությունը փորձաքննության ենթակա լինելու տեսակետից դասակարգվում է ըստ հզորության, սակայն հետագայում, որպես գործող կազմակերպություն, թույլտվություն ստանալու համար, այն պետք է դիտարկվի ըստ ՕՊՕ-ի և այլն.

4) այսպիսով, «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքը և ոլորտի նորմատիվաիրավական դաշտն ընդհանուր առմամբ կարող է բնութագրվել որպես թերի՝ ներքին հակասությունների, բացերի և երկիմաստությունների առկայությամբ, կիրառումը խթանող նորմերի և գործընթացների, ինչպես նաև միջազգային պարտավորությունների կատարման համար համալիր մոտեցումների բացակայությամբ:

17. Սույն հայեցակարգի նպատակն է իրավական հենքի ստեղծման միջոցով ապահովել մթնոլորտային օդի պահպանության արդյունավետ կառավարումը՝ ժամանակակից մոտեցումներին համապատասխան և կայուն զարգացման համատեքստում: Նոր խմբագրությամբ «Մթնոլորտային օդի պահպանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի ընդունումը կամրագրի մթնոլորտային օդի պահպանության ժամանակակից մոտեցումները, մասնավորապես՝ կներդաշնակեցվեն աշխարհում ընդունված և ներկայումս երկրում գործող օդի որակի գնահատման չափանիշները, արտանետումների սահմանափակման նպատակով և զարգացած երկրներում լայնորեն կիրառվող «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրման պահանջարկը՝ այն համատեղելով արտանետումների սահմանափակման էկոլոգիական (այդ թվում տարածքային) սկզբունքի

հետ, վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրներից) հաշվառման միասնական համակարգի ստեղծման անհրաժեշտությունը: Այս ամենը ոչ միայն ավելի արդյունավետ կդարձնեն մթնոլորտային օդի պահպանության կառավարումը, այլ նաև կնպաստեն միջազգային պայմանագրերով ամրագրված պարտավորությունների պատշաճ կատարմանը:

V. Առաջարկվող լուծումները

18. Հիմնական փոփոխությունները.

1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ օրենքի մշակում, որտեղ՝

ա. մթնոլորտային օդի որակի գնահատման մասով՝

օրենքը կլրացվի «կրիտիկական մակարդակ» հասկացությամբ, ինչպես նաև դրա որոշման մեթոդների, կիրառման, աղտոտվածության մոնիթորինգի, վերահսկողության լիազորությունների սահմանմամբ,

բ. շարժական աղբյուրների արտանետումների մասով՝

մեքենաների, վառելիքի և շարժիչների նկատմամբ տարեց տարի ԵՄ և ԵԱՏՄ երկրներում խստացող պահանջները Հայաստանում կիրառելու համար իրավական հենքի ստեղծմամբ, ինչպես նաև ներկայումս ներմուծվող վառելիքի և շարժիչների նկատմամբ գործող սահմանափակումների՝ օրենսդրորեն ամրագրմամբ,

գ. արտանետումների հաշվառման մասով՝

վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների (անշարժ և շարժական աղբյուրներից) հաշվառման և տվյալների արխիվացման միասնական համակարգի ստեղծման վերաբերյալ դրույթի սահմանմամբ,

դ. անշարժ աղբյուրներից արտանետումների սահմանափակման մասով՝

«տեխնիկական նորմատիվների» և «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» որոշման մեթոդների կիրառման, մոնիթորինգի, վերահսկողության լիազորությունների սահմանմամբ: «Լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրման հաջողության համար անհրաժեշտ է երեք հենակետ՝ քաղաքական կամք. օրենսդրության մշակում, ինստիտուցիոնալ կարողությունների հզորացում, կադրերի առկայության շարունակականության ապահովում; համապատասխան ռեսուրսներ. ֆինանսական (միջազգային և տեղային), և մարդկային (կադրերի ուսուցում, համապատասխան կադրերի աճեցման համակարգի կառուցում, քանի որ տեխնոլոգիաների ներդրման

գործում շատ կարևոր է ազգային կարողությունները՝ ընդունելու, կլանելու նոր գիտելիքները և մոտեցումները); և համապատասխան տեխնոլոգիաների առկայություն.

2) բոլոր ուղղությունները ենթադրում են համակարգային զարգացում հետևյալ սխեմայով. նպատակ - ենթանպատակներ – ենթանպատակներին հասնելու ժամանակի հստակեցում - հստակ գնահատման չափանիշներ՝

ա. տեխնոլոգիաների ներդրումը պահանջում է անցումային դրույթների մշակում՝ հնարավորության շրջանակների հստակեցման (նոր տեխնոլոգիայի ընկալման և կիրառման գիտելիքների առկայության, ֆինանսական անհրաժեշտ միջոցների հայթայթում) և համապատասխան իրավական ակտերի մշակում և հաստատում.

բ. այս ամենի առկայության դեպքում նոր կառուցվող, վերակառուցվող և ընդլայնվող կազմակերպությունները պետք է նախագծվեն լավագույն հասանելի տեխնոլոգիաների հիման վրա և նպատակը կլինի տվյալ բնագավառի համար հաստատված տեխնիկական նորմատիվների ապահովումը: Գործող կազմակերպությունները կունենան օրենքով ամրագրված 10-ը տարվա ժամկետ վերազինվելու համար.

3) «Լավագույն հասանելի տեխնոլոգիա» արտահայտության մեջ՝

ա. «լավագույն» նշանակում է ժամանակակից ամենաարդյունավետ միջոցը շրջակա միջավայրի պահպանության բարձր մակարդակի հասնելու համար,

բ. «հասանելի» նշանակում է, որ այն հնարավոր է ներդնել համապատասխան տնտեսության ոլորտում՝ հաշվի առնելով տնտեսական և տեխնիկական կենսունակ պայմանները, տվյալ երկրում համապատասխան արտադրության ծախսերը և օգուտները, ինչպես նաև տվյալ կազմակերպության կողմից դրա կիրառելիության նպատակահարմարությունը,

գ. «տեխնոլոգիա» բառը կրկնակի իմաստ ունի. 1) օգտագործվող տեխնիկական մեթոդներ (տեխնոլոգիաներ) և 2) դրանց նախագծման, կառուցման, սպասարկման, շահագործման և շահագործումից դուրս բերման ճանապարհներ.

4) այսպիսով, ԼՀՏ նշանակում է ամենաարդյունավետ և ժամանակակից տեխնոլոգիա, որը կարելի է գործնականում կիրառել տվյալ տնտեսությունում՝ շրջակա միջավայրի վրա վնասակար ազդեցության, մասնավորապես՝ վնասակար նյութերի արտանետումների կանխարգելման, կամ եթե դա հնարավոր չէ՝ նվազեցման համար,

5) լավագույն հասանելի տեխնոլոգիաների ներդրման մեխանիզմը գործող կազմակերպությունների համար ենթադրում է հետևյալ քայլերը՝

ա. կարևորագույն ոլորտների ընտրությունը (ըստ համապատասխան կառավարության որոշմամբ սահմանված կարգի և հաստատված հստակ չափանիշների),

բ. յուրաքանչյուր ոլորտի համար աշխարհում առկա լավագույն տեխնոլոգիաների ուսումնասիրություն և Հայաստանի համար ընտրված ոլորտների ընդունելի/հասանելի տեխնոլոգիաների ընտրություն՝ («Լավագույն հասանելի տեխնոլոգիաների տեղեկատու փաստաթղթի եզրակացության» մշակում և համապատասխան իրավական ակտով ամրագրում),

գ. լավագույն հասանելի տեխնոլոգիաների կիրառմամբ մթնոլորտային օդն աղտոտող վնասակար նյութերի տեխնիկական նորմատիվների (չափաքանակների) սահմանում՝ համապատասխան կառավարության որոշմամբ,

դ. կոնկրետ կազմակերպություն վերազինվելու համար անհրաժեշտ ներդրումների չափերի որոշումը,

ե. ընտրված տեխնոլոգիայի ներդրմանն ուղղված միջոցառումների ծրագրի մշակումը և, անհրաժեշտության դեպքում, հաստատումը,

զ. վերը նշված միջոցառումների ծրագրի իրականացումը և համապատասխան մասնագետների ուսուցումը և վերապատրաստումը:

19. Օրենքն ընդունելուց հետո անհրաժեշտ կլինի՝

1) նոր ենթաօրենսդրական ակտերի մշակում, ինչպես նաև գործող իրավական ակտերում համապատասխան փոփոխությունների կատարում.

2) «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» տեղեկատվական բազայի ստեղծում.

3) տեխնոլոգիաների ներդրման և սպասվող արդյունքների համապատասխան տնտեսական հաշվարկների իրականացման մեթոդների մշակում կամ տեղայնացում.

4) վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումների հաշվառման միասնական համակարգի մշակում.

5) շարժական աղբյուրներից արտանետումների հաշվառման ժամանակակից ծրագրային փաթեթների տեղայնացում և դրանց կիրառման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման իրավական հենքի ստեղծում:

VI. Առավելությունները

20. Սույն Հայեցակարգը, ընդունման դեպքում, իրավական հիմք կհանդիսանա «Մթնոլորտային օդի պահպանության մասին» նոր խմբագրությամբ ՀՀ օրենքի մշակման համար, որտեղ կամրագրվեն վերը նշված և գործող Օրենքում չընդգրկված դրույթները և սուտեցումները: Այնուհետև, նոր խմբագրությամբ օրենքի ընդունումից հետո, կմշակվի օրենքի կիրարկումն ապահովող ենթաօրենսդրական ակտերի մշակման

ժամանակացույց (միջոցառումների ծրագիր), որտեղ հաշվի կառնվեն բոլոր փոփոխությունները՝ համակարգային մոտեցմամբ և փոխկապակցված:

VII. Ֆինանսական գնահատականը

21. «Մթնոլորտային օդի պահպանության մասին» ՀՀ օրենքի նախագծի հայեցակարգի ընդունման հետ կապված Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի եկամտային և ծախսային մասերում փոփոխություններ չեն սպասվում: Արտանետումների միասնական հաշվառման համակարգը կստեղծվի Գլոբալ էկոլոգիական հիմնադրամի (ԳԷՀ) ֆինանսավորմամբ իրականացվող «Կլիմայի փոփոխության մասին ազգային հաղորդագրություն» ծրագրի շրջանակներում:

VIII. Ամփոփ եզրակացություն

22. Սույն հայեցակարգին համապատասխան խմբագրված նոր «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքով կամրագրվեն ժամանակակից սկզբունքները: Մասնավորապես, օրենքով կամրագրվեն էկոհամակարգային մոտեցմամբ մթնոլորտային օդի պահպանության խնդիրների լուծումը, «տեխնիկական նորմատիվների» և «կրիտիկական մակարդակների» սահմանումը և դրանց ներդրման մեխանիզմները՝ «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» միջոցով, ինչպես նաև աղտոտման անշարժ աղբյուրներ ունեցող կազմակերպությունների դասակարգումը, արտանետումների թույլտվությունների տրամադրման գործընթացները:

23. Օրենքի կիրարկումն ապահովելու համար անհրաժեշտ կլինի՝

1) նոր իրավական ակտերի մշակում և գործող իրավական ակտերում փոփոխությունների և լրացումների կատարում.

2) համապատասխան նորմատիվամեթոդական փաստաթղթերի մշակում և ներդրում.

3) «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» տեղեկատվական բազայի ստեղծում.

4) տեխնոլոգիաների ներդրման և սպասվող արդյունքների համապատասխան հաշվարկների իրականացման մեթոդաբանության մշակում և ներդրում.

5) համապատասխան իրավական ակտերով տեխնոլոգիաների ներդրման իրական ժամկետների հստակեցում և հաստատում.

6) «լավագույն հասանելի տեխնոլոգիաների» ներդրումը խթանող մեխանիզմների զարգացում և ընդլայնում, ճկուն գործիքների մշակում ու ներդրում: